ՄԱՅՐ ԱԹՈՌԻՄ

Մայիսի 2-ին, շաբաթ.—*Երեկոյան ժամը 19-ին հոգևոր ճեմարանի դահլիճում դասախոս, աշխարհագրագետ Կամսար Ավետիսյանը բանախոսեց հյուսիսային Իտալիայի նշանավոր երկու քաղաքների՝ Վենետիկի և Միլանի պատմական հուշարձանների մասին։*

*
* *

Մայիսի 3-ին, կիրակի.—*Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը։*

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

*
* *

Մայիսի 7-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի.

Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, ս. պատարագ է մատուցում տ. Շնորհք վրդ. Գասպարյանը։ Պատարագի երգեցողությունը կատարեցին հոգևոր ճեմարանի սաները։

Հավարտ ս. պատարագի Իջման ս. սեղանի առաջ քարոզեց պատարագիչ հայր սուրբը՝ «Երթայք աշխարհ ամենայն, և քարոզեցէք զաւետարանն ամենայն արարածոց։ Որ հաւատայ և մկրտիցի՝ կեցցէ. և որ ոչն հաւատայ՝ դատապարտեսցի» բնաբանով։

Քարոզից հետո տեղի ունեցավ հայրապետական մաղթանք՝ ի հիշատակ հայրապետական Աթոռի փոխադրության Սսից էջմիածին, 1441 թվականին։

*
* *

Մայիսի 10-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ.

Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Շնորհք վրդ. Գասպարյանը և քարոզում՝ «Տէր, կամիմք զՅիսուս տեսանել» բնաբանով։

*
* *

Մայիսի 17-ին, կիրակի.—Հոգեգալուստ Պենտեկոստէ.

Օրվա մեծ տոնի առիթով Մայր տաճարում հանդիսավոր ս. պատարագ է մատուցում փոխ-լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Մանթուրյանը։

*
* *

Մայիսի 18-ին, երկուշաբթի.—*Առավոտյան ժամը 10-ին հոգևոր ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ ամավերջի քննությունների բացման հանդիսությունը։*

Արարողությունից հետո հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Շնորհք վրդ. Գասպարյանը ուսանողությանը բարեմաղթեց հաջողություն՝ լավագույն արդյունքներով փակելու համար 1969—1970 ուսումնական տարին։

Բանավոր ու գրավոր ամավերջի քննությունները կտևեն մինչև մայիսի վերջերը։

*
* *

Մայիսի 24-ին, կիրակի.—*Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց տ. Հակոբ քհն. Հակոբյանը։*